Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26-ի N 395 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են էլեկտրոնային աճուրդի միջոցով պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Էլեկտրոնային աճուրդով պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացները կանոնակարգվում են «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների հիման վրա:

3. Էլեկտրոնային աճուրդի համակարգը (այսուհետ՝ համակարգ) իր մեջ ընդգրկում է «Ինտերնետ»-ի տիրույթում http://www.e-auctions.am դոմենի անունով կայք, էլեկտրոնային սարքավորումներ, գործիքներ և ծրագրեր, որոնց միջոցով էլեկտրոնային աճուրդի կազմակերպման ընթացքում ավտոմատ եղանակով ընտրվում է աճուրդի հաղթողը:

4. Էլեկտրոնային աճուրդով օտարման ենթակա է ցանկացած պետական գույք, այդ թվում՝ անշարժ և շարժական, ինչպես նաև օգտագործման իրավունք (վարձակալություն)՝ բացառությամբ «Պետական գույքի կառավարման մասին» և «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված օտարման ոչ ենթական գույքի:

5. Էլեկտրոնային աճուրդով վարձակալության են տրամադրվում պետական մարմիններին ամրացված, այդ թվում՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն-

ներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքը, որը պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների բավարարման համար օգտագործման որոշակի ժամանակահատվածում համարվում են ազատ կամ թերի ծանրաբեռնված:

6. Էլեկտրոնային աճուրդը կազմակերպում և անցկացնում է էլեկտրոնային աճուրդի կազմակերպիչը:

7. Էլեկտրոնային աճուրդի համակարգող և կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

8. Էլեկտրոնային աճուրդի կազմակերպչի ղեկավարն իր կողմից տրված հրամանի համաձայն սահմանում է համակարգից օգտվողներին և նրանց գործառույթները:

9. Համակարգից օգտվողներն են՝

1) համակարգի շահագործման և դրանից օգտվելու թույլատվություն ունեցող անձինք՝ ելնելով յուրաքանչյուր աշխատակցի կողմից իրականացվող գործառույթներից և պահանջվող համապատասխան մասնագիտական առկայությունից.

2) աճուրդային հանձնաժողովը, որը հսկում է էլեկտրոնային աճուրդի անցկացման ամբողջ ընթացքը և համակարգի միջոցով հաղթողին ընտրելու հիման վրա, աճուրդի կայացման օրը, որոշում է ընդունում հաղթող մասնակցի վերաբերյալ, կազմում է այդ մասին արձանագրություն և ներկայացնում աճուրդի հաղթող մասնակցի ստորագրությանը, իսկ վճարումները սահմանված կարգով ամբողջությամբ կատարելուց հետո՝ կազմակերպչի ղեկավարի հաստատմանը: Աճուրդային հանձնաժողովը բաղկացած է առնվազն 5 անդամից.

3) աճուրդի համակարգողը, ով իրականացնում է համակարգում մասնակիցների գրանցումն ու դրա հաստատումը, ապահովում է նաև համակարգի միջոցով, հրամանի և սույն կարգի համաձայն, մասնակիցներին տեղեկությունների տրամադրումը և ընդունումը: Աճուրդի համակարգողը չի կարող հանդիսանալ աճուրդային հանձնաժողովի անդամ:

10. Էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ զանգվածային լրատվության միջոցով և կազմակերպչի էլեկտրոնային կայքում www.e-auctions.am (այսուհետ՝ կայք)՝ 3 լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն), ինչպես նաև կոմիտեի պաշտոնական և www.azdarar.am կայքերում:

11. Էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները՝

1) աճուրդի իրականացման սկիզբը՝ տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և ժամը.

2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը).

3) աճուրդի կազմակերպչի գտնվելու վայրը (հասցեն), էլեկտրոնային կայքի հասցեն.

4) աճուրդի ձևը և անցկացման կարգը.

5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ գույքի անվանումը, գույքի նկատմամբ սահմանափակումները, եթե գույքն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը), շահագործման պատմությունը և (կամ) արտադրման տարեթիվը, լուսանկարները, (անհրաժեշտության դեպքում՝ տեսաձայնագրությունները), գույքի մեկնարկային գինը, գույքը վարձակալությամբ տրամադրելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև գույքի վիճակը բնութագրող այլ տեղեկություններ.

6) աճուրդին գրանցվելու և մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը.

7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը.

8) էլեկտրոնային աճուրդի մասնակիցների գրանցման վերջնաժամկետը.

9) մասնակիցների կողմից գնային հայտերի ներկայացման սկիզբը՝ տարեթիվը, ամիսը, ամսաթիվ և ժամը.

10) էլեկտրոնային աճուրդի տևողությունը՝ ժամ, րոպե, որի ընթացքում որոշվում է ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը.

11) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, նվազագույն գնային հավելումի չափը, ինչպես նաև գնման գնի կամ վարձավճարի վճարման կարգը և ժամկետները.

12) էլեկտրոնային աճուրդին մասնակցության վճարի մեծությունը, վճարման կարգը և ժամկետները.

13) նախավճարի և մասնակցության վճարի փոխանցման հաշվեհամարները.

14) գույքն ուսումնասիրելու վայրը, ամսաթիվը և ժամանակը.

15) անշարժ գույքի օտարման դեպքում հողի կադաստրային արժեքը, վճարման կարգը և ժամկետները:

12. Էլեկտրոնային աճուրդով օտարման ենթակա գույքի վաճառքի, ինչպես նաև վարձակալության տրամադրվող գույքի (տարածքի) վարձավճարի մեկնարկային գինը, որից սկսվում է յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդը, սահմանվում է պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված իրավական ակտերով՝ հաշվի առնելով սահմանված կարգերի համաձայն տվյալ գույքի և տարածքի վարձավճարի գնահատված արժեքի մեծությունը:

13. Աճուրդն անցկացվում է լոտի մեկնարկային գնի բարձրացմամբ, առնվազն մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

14. Համակարգում գրանցվելու և աճուրդին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին ներկայացնում է անձնագիր կամ նույնականացման

քարտ, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտ կամ ճամփորդական փաստաթուղթ, իսկ օտարերկրյա քաղաքացին՝ անձնագիր, իրավաբանական անձի դեպքում՝ հիմնադիր մարմնի որոշում, հիմնադիր փաստաթղթեր, (լիազորված անձի առկայության դեպքում՝ նաև լիազորագիր), (բոլոր դեպքերում էլ ստորագրված, սկանավորված PDF ֆայլ), ինչպես նաև տալիս է հայտարարություն՝ մինչ աճուրդի սկիզբը գրանցման ներկայացված փաստաթղթերում փոփոխությունների առկայության դեպքում գրանցման համակարգ անմիջապես փոփոխությունները մուտքագրելու մասին (հայտարարություն՝ Ձև N 1):

15. Համակարգում գրանցումը կատարվում է էլեկտրոնային եղանակով:

16. Համակարգողը մասնակցի գրանցումից հետո ստուգում է մասնակցի կողմից գրանցման ընթացքում մուտքագրված տվյալներն ու ուղարկված ֆայլերը: Մուտքագրված տվյալներն ու ուղարկված ֆայլերը սույն կարգի 14-րդ կետի պահանջներին համապատասխանելու դեպքում համակարգողը հաստատում է տվյալ օգտվողի գրանցումը, չհամապատասխանելու դեպքում մերժում է գրանցումը՝ նշելով պատճառը, ինչի մասին մասնակիցն ավտոմատ ծանուցվում է էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով:

17. Աճուրդին մասնակցելու համար համակարգում գրանցված անձը յուրաքանչյուր լոտի աճուրդին մասնակցելու համար վճարում է մասնակցության վճար և լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով աճուրդի նախավճար:

18. Աճուրդի մասնակիցը նախավճարը կամ մասնակցության վճարն իրականացնում է առցանց բանկային հաշվեհամարով կամ բանկի մասնաճյուղ այցելելով և փոխանցում կատարելով:

19. Մինչև յուրաքանչյուր աճուրդի ավարտն աճուրդի մասնակիցների անհատական տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ:

20. Յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդն սկսվում է հրապարակային ծանուցման հրավերով սահմանված ժամին: Ընդ որում, մեկից ավելի լոտի աճուրդի կազմակերպման դեպքում հաջորդ լոտի աճուրդն սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտելուց հետո:

21. Էլեկտրոնային աճուրդի սկիզբ չի կարող սահմանվել ժամը 15:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

22. Աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 3 րոպե, եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում նոր քայլ չի կատարվում: Աճուրդի ընթացքում յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային առաջարկը՝ առնվազն նվազագույն հավելման չափով: Եթե աճուրդի (ընդհանուր տևողության) ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված մինչև 3 րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցն ավտոմատ կարգով համակարգի միջոցով ընտրվում է հաղթող:

23. Աճուրդի համակարգողն աճուրդային հանձնաժողովի կողմից հաղթող մասնակցի մասին որոշում կայացնելուց հետո աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն աճուրդի կայացման օրը համակարգի միջոցով ուղարկում է հաղթող մասնակցին, այն ստորագրելու և վաճառքի դեպքում՝ գնման գնի վճարման, իսկ վարձակալության տրամադրման դեպքում՝ վարձավճարի վճարման մասին համաձայնություն ստանալու համար:

24. Աճուրդի հաղթող մասնակիցը գնման գնի կամ վարձավճարի վճարման պարտավորությունը սահմանված ժամկետում կատարելու մասին համաձայնությունը և ստորագրված աճուրդային արձանագրությունը, աճուրդի կայացման օրը մինչև աշխատանքային օրվա ավարտը, համակարգի միջոցով կամ առձեռն փոխանցում է կազմակերպչին:

25. Աճուրդի կազմակերպիչը սույն կարգի 24-րդ կետով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում գնման գնի կամ վարձավճարի վճարման մասին հավաստումն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հաղթող մասնակցին համակարգի միջոցով տրամադրում է ընդունման-հանձնման ակտը: Ընդ որում, անշարժ գույքի օտարման դեպքում՝ նաև առքուվաճառքի պայմանագիրն ստորագրելու մասին առաջարկ, որտեղ նշվում է մնացած վճարումները և որոշակի պարտադիր գործողություններ կատարելու պահանջը, իսկ վարձակալության տրամադրման դեպքում՝ վարձակալության պայմանագիր ստորագրելու առաջարկ:

26. Օտարման ենթակա գույքի աճուրդի հաղթող մասնակիցը համակարգի միջոցով գրավոր առաջարկն ստանալուց հետո՝

1) շարժական գույքի դեպքում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում նշված վճարումները կատարելուց հետո պարտավոր է ներկայանալ գույքի գտնվելու վայր, հանձնման-ընդունման ակտն ստորագրելու և այն ընդունելու, սահմանված իրավունքի գրանցման դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում գրանցումը պարտադիր կատարելու պայմանով (գրավոր առաջարկ՝ Ձև N 2).

2) անշարժ գույքի դեպքում՝ մեկամսյա ժամկետում առաջարկում նշված վճարումները կատարելուց հետո պարտավոր է ներկայանալ կոմիտե առքուվաճառքի պայմանագիրը և հանձնման-ընդունման ակտն ստորագրելու, սահմանված կարգի համաձայն կատարել սեփականության իրավունքի գրանցում (գրավոր առաջարկ՝ Ձև N 2.1):

27. Վարձակալության տրամադրվող գույքի աճուրդի հաղթող մասնակիցը համակարգի միջոցով առաջարկն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմիններին ամրացված և պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքի մեկ տարվանից ավելի ժամկետի դեպքում պարտավոր է ներկայանալ կոմիտե, իսկ պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքը մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման դեպքում՝ տվյալ կազմակերպություն վարձակալական պայմանագիր կնքելու և պայմանագրից բխող հետագա գործընթացն իրականացնելու համար (գրավոր առաջարկ՝ Ձև N 2.2):

28. Աճուրդի հաղթող մասնակիցը սույն կարգի 24-րդ կետով առաջարկվող վճարումները կարող է իրականացնել առցանց բանկային հաշվեհամարով կամ բանկի մասնաճյուղ այցելելով և փոխանցում կատարելով:

29. Աճուրդի կազմակերպիչը պարտավոր է տրանսպորտային միջոցների վաճառքի դեպքում սահմանված կարգով հանձնման–ընդունման ակտով տրանսպորտային միջոցը հաղթող մասնակցին հանձնելու հաջորդող աշխատանքային օրը գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ծառայությանը:

30. Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարը վերադարձվում է անկանխիկ եղանակով բանկային փոխանցման միջոցով կամ առցանց դիմում ներկայացնելու դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

31. Էլեկտրոնային աճուրդը համարվում է չկայացած, եթե՝

1) աճուրդին գրանցվել և չի մասնակցել ոչ մի գնորդ կամ վարձակալ.

2) աճուրդում հաղթած մասնակիցը չի ստորագրել աճուրդային արդյունքների մասին արձանագրությունը:

32. Սույն կարգի պահանջների խախտմամբ կազմակերպված և անցկացված էլեկտրոնային աճուրդը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր:

33. Սույն կարգի 31-րդ կետում նշված դեպքերում աճուրդի նախավճարի գումարը վերադարձվում է եռօրյա ժամկետում:

34. Եթե աճուրդում հաղթած մասնակիցն ստորագրել է աճուրդային արդյունքների մասին արձանագրությունը, սակայն օտարման դեպքում չի վճարել գնման գինը, վարձակալության դեպքում՝ սահմանված ժամկետներում հետագա վճարումները, ապա աճուրդի նախավճարը չի վերադարձվում և այն ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

35. Էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարվելու դեպքում աճուրդի կազմակերպչի կողմից էլեկտրոնային աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կազմվելուց հետո դրա մասին տեղեկատվությունը տեղադրվում է կազմակերպչի էլեկտրոնային կայքում:

36. Համակարգի տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքում աճուրդների անցկացումը կարող է կասեցվել մինչև տեխնիկական անսարքությունների վերացումը, որոնց մասին աճուրդի կազմակերպիչը տեղեկացնում է տվյալ լոտի աճուրդի մասնակիցներին՝ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով: Յուրաքանչյուր տեխնիկական անսարքության դեպքում կազմվում է տեղեկանք անսարքության պատճառների մասին և այն տեղադրվում է էլեկտրոնային մատյանում: Տեղեկանքին կից ներկայացվում է համակարգն սպասարկող անձի եզրակացությունը:

37. Տեխնիկական անսարքությունները վերացնելուց հետո աճուրդը շարունակվում է նույն պայմաններով:

38. Աճուրդի մասնակիցների համակարգում տեխնիկական անսարքության (ձախողման) դեպքերի համար կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում:

39. Աճուրդի համակարգողն աճուրդի անցկացման ընթացակարգը, համակարգի տեխնիկական անսարքության դեպքում՝ դրա մասին տեղեկանքը, աճուրդով վաճառքի կամ վարձակալության տրամադրման ենթակա լոտերի գնահատման հաշվետվությունները և աճուրդի արդյունքների մասին տեղեկատվությունը ներառում է էլեկտրոնային մատյանում:

40. Էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում սահմանված կարգով կազմակերպվում է նոր էլեկտրոնային աճուրդ:

41. Էլեկտրոնային աճուրդը չկայանալու դեպքում կազմակերպիչն օտարման կամ վարձակալության տրամադրման մասին իրավական ակտով սահմանված նախորդ աճուրդի մեկնարկային գնի նվազման չափով և ժամկետներում կազմակերպում է նոր աճուրդ:

42. Եթե լոտի (լոտերի) աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով, ապա այդ դեպքերում լոտի (լոտերի) վաճառելու նպատակով հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով, առանց մեկնարկային գնի նվազման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ձև N 1

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարություն տվողի _____
(անունը, ազգանունը, հասցեն, անձնական տվյալները)

_____

_____:

Պարտավոր եմ համակարգում գրանցվելուց հետո, մինչև աճուրդին մասնակցելը, գրանցման ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքում փաստաթղթերում տեղ գտած փոփոխություններն անմիջապես անցկացնել գրանցման համակարգ:

Ձև N 2

_____

(աճուրդում հաղթող մասնակցի քաղաքացու դեպքում՝ անձնագիրը կամ նույնականացման քարտի տվյալները, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտը կամ ճամփորդական փաստաթուղթը, իրավաբանական անձի դեպքում՝ հիմնադիր փաստաթղթեր)

_____

(աճուրդում հաղթող մասնակցի հասցեն)

Գ Ր Ա Վ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Հիմք ընդունելով 20— թ.-ի _____ -ին էլեկտրոնային
(ամիսը, օրը, ժամը)
աճուրդային հանձնաժողովի արձանագրությունը _____
(շարժական գույքի անվանումը)

գույքը _____ դրամ գումարով առաջարկվում է Ձեզ:
(թվերով և բառերով)

Դուք պարտավոր եք 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկում նշված վճարումները կատարելուց հետո ներկայանալ գույքի գտնվելու վայր, հանձնման-ընդունման ակտն ստորագրել և այն ընդունել, սահմանված իրավունքի պետական գրանցման դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել իրավունքի պետական գրանցումը:

Նշված ժամկետում չներկայանալու, ինչպես նաև սահմանված ժամկետում գումարը չվճարելու դեպքում Դուք կզրկվեք գույքը գնելու իրավունքից:

_____

(ստորագրությունը)

Ձև N 2.1

_____

(աճուրդում հաղթող մասնակցի քաղաքացու դեպքում՝ անձնագիրը կամ նույնականացման քարտի տվյալները, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտը կամ ճամփորդական փաստաթուղթը, իրավաբանական անձի դեպքում՝ հիմնադիր փաստաթղթեր)

_____

(աճուրդում հաղթող մասնակցի հասցեն)

Գ Ր Ա Վ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Հիմք ընդունելով 20— թ.-ի _____ -ին էլեկտրոնային
(ամիսը, օրը, ժամը)
աճուրդային հանձնաժողովի արձանագրությունը _____
(անշարժ գույքի անվանումը)

գույքը _____ դրամ գումարով առաջարկվում է Ձեզ:
(թվերով և բառերով)

Դուք պարտավոր եք եռամսյա ժամկետում գրավոր առաջարկում նշված վճարումները կատարելուց հետո ներկայանալ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե առուվաճառքի պայմանագիրն ստորագրելու և սահմանված կարգի համաձայն սեփականության իրավունքը գրանցելու նպատակով: Նշված ժամկետում չներկայանալու, ինչպես նաև սահմանված ժամկետում գումարը չվճարելու դեպքում Դուք կզրկվեք գույքը գնելու իրավունքից:

_____

(ստորագրությունը)

Ձև N 2.2

_____

(աճուրդում հաղթող մասնակցի քաղաքացու դեպքում՝ անձնագիրը կամ նույնականացման քարտի տվյալները, փախստական անձի դեպքում՝ նույնականացման քարտը կամ ճամփորդական փաստաթուղթը, իրավաբանական անձի դեպքում՝ հիմնադիր փաստաթղթեր)

_____

(աճուրդում հաղթող մասնակցի հասցեն)

Գ Ր Ա Վ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Հիմք ընդունելով 20— թ.-ի _____ -ին էլեկտրոնային
(ամիսը, օրը, ժամը)
աճուրդային հանձնաժողովի արձանագրությունը _____
(գույքի անվանումը, գտնվելու վայրը, մակերեսը (քառ. մ)

գույքը _____ դրամ վարձավճարով առաջարկվում է Ձեզ:
(թվերով և բառերով)

Դուք պարտավոր եք գրավոր առաջարկն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե (պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքը մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման դեպքում՝ տվյալ կազմակերպություն) վարձակալական պայմանագիր կնքելու և պայմանագրից բխող հետագա գործընթացն իրականացնելու համար:

_____

(ստորագրությունը)